




„ՀԱՅ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎԸ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ“  
ԿԻՆՈՆԿԱՐԻ ՄԵԾ ՀԱԶՈՂՈՒԹՅՈՒՆԸ  
ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂՈՒԹՆԵՐՈՒՄ



«ԷՋՄԻԱԾՆ» ամսագրի 1946 թ. հունվար ամսվա համարում գրել էինք «Հայ Եկեղեցական Ժողովը էջմիածնում» կինոնկարի Հայաստանում ունեցած հաջողության մասին\*):

Խորը հուզական այդ կինոնկարը 1946 և 1947 թվերի ընթացքում մեծ հաջողությամբ ցուցադրվել է նաև ամերիկյան չերկրների և Եվրոպայի ու Միջին և Մերձավոր Արևելքի երկրների մի շարք հայկական գաղութներում. այսօր էլ ոչ նվազ հաջողությամբ շարունակվում է նրա ցուցադրումը սփյուռքով մեկ ցրված հայկական բազմաթիվ գաղութներում: Բազմահազար կինոպիտողներ ցուցասրահներից հեռանում են նկարի թողած անջնջելի ու խորը տպավորության տակ:

Գաղութահայ թերթերը լի են հայրենի հարազատ բնության վեհասքանչ տեսարաններով հաղեցված այդ սքանչելի ֆիլմի ցուցադրման ազդերով. հաճախ ցուցադրման մասին թերթում արված հայտարարության հետ մեկտեղ տպագրված են ր տեսնում ֆիլմից վերցրված մեկ կամ ավելի կադրեր: Երբեմն էլ այդ հայտարարությունները այնպես բազմաբովանդակալից, վեհիմաստ ու գեղարվեստորեն են լինում շարահյուսված, որ չեն կարող չգրավել ընթերցողի ուշադրությունը: Այս տեսակետից շափազանց ուշադրավ է Ամերիկահայ Հառաչագիմական Միության հայտարարությունը՝ տպագրված «Լրրաբեր» թերթում, «Ազգային Եկեղեցական Համաժողովն ու Ամենայն Հայոց Կաթողիկոսի օժումը»,— ինչպես իրենք են անվանում,— կինոֆիլմի նյու-Յորքում 1946 թվին ցուցադրվելու առթիվ:

\* ) Տես «ԷՋՄԻԱԾՆ» 1946 թ., հունվար, էջ 51—56:

«ԱՀԱ այն հիանալի ֆիլմը, որուն ամեն հայ անհամբեր կսպասեր անցյալ տարի էջ-միածնի մեջ տեղի ունեցած Ազգային Եկեղեցական ժողովին ի վեր»

**ՈՂՋՈՒՆՆՅԵՔ...** Արարատը պատանոի վրա, որ ազատ Հայաստանի սահմանի վրա, տակավին կալանավորն է թուրք բռնազրավիչներու Սեանը, Հայկական լեռնաշղթայի շքնաղազեղ դուտորը, Հայաստանի էլեկտրականության անսպառ ակունքը»:

Անկարելի է կարդալ այս տողերը առանց խորը հուզումի. այսպիսի հուզական շնչով է գրված և հայտարարության շարունակությունը. —

«ԴԻՏԵՑԵՔ... էջմածին ժամանող եկեղեցական պատգամավորները և հյուրերը. եկեղեցական Համաժողովի կազմն ու կարևոր նիստերը. Մայր Տաճարի մեջ վեհապառ Հայրապետի ընտրությունն ու օծման տպավորվել հանդիսավոր արարողությունը:

**ԼՍԵՑԵՔ...** Ամենայն Հայոց Կաթողիկոսի զեկույցն ու պատգամը. Տանն Կիլիկիո Կաթողիկոսի պատգամը. Քննորդալըրիի Ավազերեց Հյուսիս Ճանաչի ճառը. Սովետական Միության և Սովետական Հայաստանի կառավարություններու ներկայացուցիչներու ճառերը:

**ԼՍԵՑԵՔ** մանավանդ եկեղեցական հոգեզմայլ երաժշտությունն ու հիանալի ազգային և ժողովրդական մեր երգերն ու եռանակները, երգված Երևանի Պետական օպերայի ականավոր երգչուհիներու և խումբի կողմե:

**ՄԱՆՈՒԱՅԵՔ...** Ավետիք Իսահակյանի, Մարտիրոս Սարյանի, Ստ. Մալխասյանի և սովետական այլ անձնավորություններու հետ: Մանոթացեք եկեղեցական պատգամավորներու ընկերակցությամբ մեր պատմական հուշարձաններու, սրբավայրերու և Սովետական Հայաստանի հիասքանչ արդիական շինարարությանց և կոթողներու հետ:

**ՏԵՄՆԵՆԻ ԱՅՍ ՅԻՆՄԸ, ԵՐՋԱՆԿՈՒԹՅՈՒՆ Է ՀԱՅՐԵՆԱԿԱՐՈՏ ՀԱՅՈՒՆ ՀԱՄԱՐ:**

Բազմաթիվ են նաև թերթերում զետեղված սրտահույզ տպավորությունները և ցուցադրման նկարագրությունները. շատերը նույնիսկ բանաստեղծություններ են նվիրել այդ հիասքանչ ֆիլմին. այսպես օրինակ՝ Թեհրանի «Էրեբանունդ» թերթում լույս է տեսել Թեհրանի թեմի Առաջնորդ Ռուբեն Կալիսկո-

պոս Դրամբյանի «էջմածին» խորագրեր կրող բանաստեղծությունը, գրված ֆիլմի թեհրանում ցուցադրվելու առթիվ. սույն բանաստեղծությունը բաղկացած է տասն տնից, մենք մեք ենք բերում այստեղ միայն առաջին, երբորդ և շորորդ տները. —

Դարերից դար կանգնած լույսի, ազատության ֆանապարհին,  
Հգոր կամբով, ծով հավատով, ամենագոր խաչն ի ձեռիդ  
Մխիթարել, պահպանել ես արևաշուրթ ժողովրդիդ,  
Լույսի տանաւ, յույսի կանառ, անմահական է՞ՋՄԻԱՄԻՆ:

Քրտիմֆներով քն վարարուն գիրն ես պանել ժողովրդի,  
Պանպանել ես դարությունը, ավանդները նախնիների,  
Ու ծաղկել ես լուսափրիք, փարթամացել դու վերստին,  
Կյանքի աղբյուր, փառքի կայան, սրբագործված է՞ՋՄԻԱՄԻՆ:

Դարն է եկել դարին շանքել մրրիկներով ամպրոպածին,  
Հիմքից սրբել ժողովուրդներ, շրոկներով հետքն իսկ շնչին,  
Մինչ դու արթուն պաշտպանել ես քն սիրագեղ ժողովրդին  
Փրկել նրան կործանումից, ամենագոր է՞ՋՄԻԱՄԻՆ:

Կինոդիտողները այսօր էլ դեռ շարունակում են թերթերում զետեղել իրենց սրտահույզ տպավորությունները. դրանցից կրե-

րենք մի քանի օրինակներ. —  
«Լրաբեր» թերթի 1946 թ. № 50-ում զետեղված է «Եռանդավառ օր մը Մխիթարի»

հովտին մեջ» խորագիրը կրող հողվածը՝ Ա. Մարտ ստորագրողությամբ. ստորև բերում ենք այն. —

«Ազգային Նկեղեցական Համաժողովն ու Ամենայն Հայոց Կաթողիկոսի օժուճը» և «Երկիր խնդութեան» ֆիլմերը խորապես ազդեցին Միսիսիփի հովտի հասարակութեան մտքին ու հայրենական զգացումներուն վրա:

Չխեբրու Ազգային սրահը լեփլեցուն էր երկսեռ և երկու դավանանքի հաստատութեամբ: Ազգային երգերու և ավանդութիւններու հիշատակութեան ի խնդիր՝ ժողովրդի կրօնական, ազգային և հայրենասիրական ոգին բարձր որակի հասաւ:

Արարատ և Արագած հսկաներու շուքին տակ ոգի և շունչ առած պատմական Արարատյան դաշտը իր մրգառատ բերքերով, ստեղծագործութիւններով, ջրանցքներով, բողբոջող ազգային ավանդութիւններու և կուլտուրայի ներշնչող ոգին կթեւածեր բոլորի վրա,— ոգեկոշումի ի նչ հրաշագան ներշնչումներ են այս զուլգ ֆիլմերը, մանավանդ երբ զանոնք զորեղ լուսարձակներու տակ կցուցադրվին:

Ժողովուրդը խնդումներես, գոհ և նոր շունչ մը, ըսես հայրենական շունչ, առած դուքս կերթար, բայց աչքը ետ լերկ պաստառին հառած,— ո՞րմե կբաժնվեր՝ պաստառե՞ն, թե հայրենի մոգական շունչն, ոչ քիչ առաջ կապեր և այժմ ափսոսանքի հետադարձ ակնարկ կձգեր:

Հայ ժողովուրդը օտարութեան մեջ կսիրե իր կենսաշեն հայրենիքը, հոգ չէ թե ինք ինչ երկրի մեջ կապրի և տվյալ երկիրը ինչքան կգորգորա իր վրա. երբ ըուպեն գա, նա իր հայրենասիրութեան ետքը կցուցադրե—մենք տեսանք այդ:

Ֆիլմերու ցուցադրութենէն առաջ Հառաչ-դիմական մասնաճյուղիս որոշումով այդ օրը հրավիրված էր Իլինոյի 22-րդ տիսթրիքթի Քոնկրեսմեն պ. Մելվին Փրայս իր վերընտրութեան ընտրապայքարի համար խոսելու իր ճառը:

Այդ օրը, ֆիլմերու ցուցադրութեան կապակցութեամբ մեր մեջ ունեցանք պատմական հյուր մը, հանձին Ուաշինկթըն Համալսարանի հայասեր և հայագետ պրոֆեսոր Չեմպրբսին:

Բեմին վրա էր ան, Քոնկրեսմենի և ընկերներ Արամ Ներսիկյանի և Խաչիկ Մարիֆյանի հետ:

Այս բացառիկ նրստին առեմապետեց էլ Ուայ էյի ուժերն, նախկին զինվոր և «Լրաբեր»-ի երիտասարդ աշխատակից ընկ. Մամիկոն Նդիկյան:

Ան նիստը բացավ քանի մը պատշաճ

խոսքերով և ապա հրավիրեց ընկ. Առաքել Նդիկյանը ծանոթութիւններ տալու օրվան հյուրերու և ֆիլմերու նշանակութեան, անոնց քաղաքական որակին շուրջ ու հրավեր կարգադրեց և ֆիլմերու ներառումին:

Որմե վերջ խոսեցաւ փրոֆեսոր Չեմպրբս հայերեն լեզվով, որը մեծ զարմանք առթեց ներկաներուն, որ իրենց մեջ կգտնեին ամերիկացի փրոֆեսոր մը, որ հայերեն լեզվով կխոսեր մեր քաղաքական կյանքի մասին, մեր ավանդութիւններու մասին. և հրավեր կկարգար հայ ժողովուրդին, որ ամուր կեանք իր ավանդութիւններու հետ:

Ան պատկերալից օրինակ բերաւ Խրիմյան Հայրիկի կյանքն և վերջավորութեան խլեց բռտն և երկարատև ծափեր:

Ապա Մամիկոնը անգլերեն ներածականով մը ներկայացուց Քոնկրեսմեն Մ. Փրայսը և հրավիրեց զայն խոսելու:

Այս բացառիկ նիստեն հետո էր, որ մենք ըմբռնեցինք հայրենական ժապավենները լուռ և համբերատար ոգիով:

Միսիսիփիին արձագանքում է Փարիզը. «Ժողովուրդ» թիւթի 1946 թ. հոկտեմբեր 1-ի համարում տրված է ֆիլմի առաջին ցուցադրման նկարագրութիւնը. —

«Ներկաները... առաջնորդվեցան շարժանկարի հատուկ սրահը, ուր տիրող խանդավառ մթնոլորտի մեջ ցուցադրվեցան հայկական երկու նոր ժապավեններ: Այս երկու ժապավենները միմյանց ի վեր անհամբեր կսպասեք ֆրանսահայ դաղութր: Առաջինը կներկայացնե Հայոց Նկեղեցական վերջին ժողովը էջմիածնի մեջ, Ամենայն Հայոց Կաթողիկոսին ընտրութիւնն ու օժումը, երկրորդը, «Երկիր Հայրենի» սքանչելի արտադրութիւնը, մեզ ցույց կուտա Հայաստանի իր անցյալով և ներկայով:

Մտտ մեկ ու կես ժամ տևող խոսուն ժապավենները ներկաներն խլեցին անվերջ ծափեր և սքանչացումի սրտաբուխ արտահայտութիւններ, որոնք անկեղծ դրսևորումներն էին այն խոր հուզումին և ուրախութեան, զոր մարդ կզգար ի տես Վեհափառ Հայրապետին օժման արարողութեան և Սովետական Հայաստանի հրաշափառ վերածնունդին:

Կաթողիկոսական ընտրութեան առթիվ պատրաստված ժապավենը նախ ցույց կուտա Հայաստանի եկեղեցիներու ավերակները, Մեսրոպ Մաշտոցի գերեզմանը, Տաթևի վանքը, կաթողիկոսներու գերեզմանները և զանազան սրբավայրեր: Տպավորիչ տեսարաններ արտասահմանէն օդանավով ժամանող եկեղեցական և աշխարհիկ

պատգամավորներու Կտեսնենք Կիլիկիո Կաթողիկոսը, Հունաստանի այնզարդ Մազլում-յան Արքեպիսկոպոսը և Եվրոպահայ թեմի կաթողիկոսական նվիրակ Սյուրմեյան Արքեպիսկոպոսը, որ հանդիսավոր կերպով կպատարադն և կբարոզն էջմիածնա Մայր Տաճարին մեջ: Խոր լուսնյամբ կլսվին Հայ եկեղեցական երգերը, որոնք համակ խորհուրդ և վեհօրհան են այս պատմական վայրերուն մեջ: Ահա ընտրությունն ու օծումը Մայրապետյն Պատրիարք Կևորգ Զ Զեորեքչյանի, որ արցունքներով կլսն ընտրության արդյունքը Կիլիկիո Կաթողիկոսին բերնեն և ներկայությամբ Սովետական Միության և Սովետական Հայաստանի կառավարությանց կրոնական գործերու լիազորներու, որոնք խոսք առնելով կշեշտեն Հայ եկեղեցիին կատարած օգտակար դերը Հայ ժողովրդի ազատագրական դարավոր պայքարներուն և Հայրենական մեծ պատերազմին ընթացքին:

Հո՞ծ բազմության մը ներկայության կկատարվի կաթողիկոսական օծման արարողությունը և ժապավենին վերջավորության դարձյալ կտեսնենք զեղատեսիլ Սևանը և օղանավերը, որոնք արտասահման կվերադարձնեն սփյուռքի պատգամավորները: (Հողվածի շարունակությունը վերաբերում է «Երկիր Հայրենի» պատմական ու հայրենասիրական ֆիլմին):

Փարիզին արձագանքում է Կանադան: «Լրաբեր» թերթի 1947 թ. մարտի 25-ի համարում զետեղված է Խ. Սարգսյանի «Հայաստանյան ֆիլմը Պրենտֆրտի մեջ» խորագիրը կրող հոդվածը, որ բերում ենք ստորև. —

«Հայ Հառաջդիմական Միության Կեդրոնական Վարչության կարգադրությամբ զեղեցիկ պատեհություն մը ունեցանք տեսնելու Կաթողիկոսի օծումը և Երկիր խնդրության ֆիլմերու ցուցադրումը Պրենտֆրտի մեջ, փետրվար 23-ին:

Ժամանակեն առաջ հո՞ծ բազմություն մը խոնաված էր Սի Այ Օյի սրահը: Բացի քաղաքիս շրջակա քաղաքներու հետաքրքիր հայությունեն մեծ թվով հանդիսականներ անհամբեր կսպասեին նկարներու ցուցադրման:

Սենթ Քեթերինսի Հայ եկեղեցյով հովիվ էն-

թոյան վարդապետը բացավ ձեռնարկը, տալով իր հայրական օրհները Քանատայի հայության, որ բուն հետաքրքրությամբ լարված էր Հայաստանի փառքը հատկանշող այս նկարները տեսնելու: Եվ վերջապես սկսավ նկարներու ցուցադրումը:

Մեր սիրելի հայրենիք Խորհրդային Հայաստանի վերելքի և շինարարության սքանչելի տեսարանները պատկերվեցան Հայաստանին կարոտ պանդուխտ հայության, որոնք հպարտ ներշնչումներով կծափահարեն անշափելի խանդավառությամբ:

Հայկական հին և նոր ճարտարավեսի հոյակապ նմուշները, զոր մենք տեսանք, խորունկ տպավորություն ձգեցին մեր վրա: Մեր ժողովուրդը մազնիսացավ Խորհրդային Հայաստանի փառքը կազմող վերաշինական այդ հոյակապ կերտումներուն ի տես: Փառք Խորհրդային Հայաստանի ստեղծագործող աշխատավորության:

Ներշնչել էր Կաթողիկոսի օծումը: Հայոց կրոնական դարավոր գահին վրա բազմող նոր Կաթողիկոսի օծումը խորունկ տպավորություն ձգեց հանդիսականներու վրա: Մենք ապրեցանք էջմիածնա Ազգային մեծ Համագումարի սրբազան նպատակին վեհօրհանը և իրապես հպարտացանք:

Ժապավեններու ցուցադրությունը տեղյ մտտ երկու ժամ: Ժամը 11-ին հանդիսականները մեկնեցան սրահն խորունկ տպավորությամբ:

Պրենտֆրտի Հառաջդիմականի մասնաճյուղը խորին շնորհակալություններ կհայտնե կարգադիր հանձնախումբին, որ ըստ բավականի ծանր դժվարություններ հարթելով հաջողցուց քանատահայությունը արժանացնել այս փառահեղ նկարներու ցուցադրության»:

Այսպիսով «Հայ եկեղեցական ժողովը էջմիածնում» կինոֆիլմը մեծ հաջողությամբ ցուցադրվել է և շարունակվում է ցուցադրվել և՛ Արևմուտքում, և՛ Արևելքում, և՛ Հարավում ու Հյուսիսում, ամեն տեղ ու ամենուրեք, ուր հայրենաբաղձ հայերի սրտերն են բարբախում: Դեռ շատ վայրերում էլ անհամբեր ու կարոտով նրա ցուցադրմանն են սպասում բազմաթիվ վտարանդի հայեր:

